

*

Հակառակ իր ունեցած շնորհաց ծաղիկներուն՝ գաւառացի մեր քոյրերն ու եղբայրները, ընդհանրապէս եւ բնականաբար, չեն սիրեր Պոլսեցին: Եւ սակայն շուտ կը սիրահարին իրենց չսիրած Պոլսեցիին: Եւ ասիկա կեանքի առեղծուածներէն չէ: Կը սիրահարին՝ գիտնալով, որ Պոլսեցին անառակ որդին է ազգին: Աւետարանի անառակ որդիին պէս խոզարած չէ սակայն Պոլսեցին: Ան ալ խոզ ունի հարկաւ. միայն թէ Պոլսեցին խոզը իր ներսը կը պահէ կամ կ'արածէ:

*

Քանի մը տարի առաջ լուր ելաւ, թէ հին հնդկահայ հարուստ մը՝ Էմիրխանեան, ահագին գումար մը ձգած էր իր ժառանգորդներուն, որոնք կը փնտռուին: Այս լուրը լսած-չլսած, գրեթէ ամբողջ պոլսահայութիւնը, վայրկենապէս եղաւ... «Էմիրխանեան»:

Պոլսեցին ճկուն է, գիտէ անմիջապէս հանուիլ ու հագուիլ ամեն տարագ, ամեն անուն, ո՛ր երկրին, ազգին ու կրօնքին ալ պատկանի:

Այդ շրջանին Պոլսահայ ո՛ր հայրենակցիս ալ նամակ գրէի, զինքը կ'անուանէի հարազատ «Էմիրխանեան»՝ մեծ խնդութիւն պատճառելով իրեն:

Վաղը միւս օր եթէ Թերթեւեան կամ Այլասերեան անունով հարուստներ մեռնին, ամբողջ պոլսահայութիւնը կ'ըլլայ Թերթեւեան ու Այլասերեան: Եւ սուտ խօսած չըլլար:

*

Պոլսեցին ընդհանրապէս ազգասեր է, բայց ոչ հայրենասեր: Այս վերջին տարիներս եղած է «Հայաստանասեր» եւ ի՞նչու չըլլայ, քանի որ հեռու է Հայաստանէն՝ գտնուելով Պոլիս կամ արտասահման:

Հայաստանը իրեն համար «դրախտավայր» է ու նկարի մը պէս գեղեցիկ է, որքան ատեն որ հեռու է իրմէ:

Պղատոնական յուզիչ սիրով մը, ան, մերթ ընդ մերթ, ինքզինքը կապուած կը զգայ «երիտասարդ» կամ «մայր» Հայաստանին:

Իսկ եթէ մօտենայ տիկին Հայաստանին, նորէն կը սիրէ անշուշտ, սակայն ոչ նախկին վիպապաշտ թափով եւ ոչ ամեն օր: